Արձանագրություն N 2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով **անօդաչու թռչող սարքի** ձեռքբերման նպատակով կազմակերպված «**ՀՀ ՔԿ ԳՀԱՊՁԲ-ԱԹՍ-22/2**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5 — 29 նոյեմբերի 2022թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մկրտչյան, Վ. Մկրտչյան, Ս. Գարանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)*
1	**Անօդաչու թռչող սարք**	**7 500 000**

2.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

ՀՀ ՔԿ ԳՀԱՊՁԲ-ԱԹՍ-22/2 ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցեներ*
1	Արմեն Սաֆարյան ԱՁ	ՀՎՀՀ՝ 85445888, ք. Երևան, Հյուսիսային պ 6/2, հեռ. 055-66-31-34, armcopters@gmail.com
2	ՀՈՎ-ԱՐՍ ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 04236834, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 2փ, 52, բն. 5, հեռ. 091-40-32-60, nerses.manukyan@yahoo.com

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերն արձանագրեց, որ **մասնակիցների կողմից ներկայացված** հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

4.1.1 Արմեն Սաֆարյան ԱՁ

- Ներկայացված հավելված 1.1-ի (այսուհետ՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) չափաբաժնի համար նշված չէ արտադրողի կազմակերպաիրավական ձևը:

4.1.2 ՀՈՎ-ԱՐՍ ՍՊԸ

- Ներկայացված հավելված 1.1-ի (այսուհետ՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) չափաբաժնի համար նշված չէ արտադրողի կազմակերպաիրավական ձևը:
- Տեխնիկական բնութագիր դաշտում պետք է նշել հետևյալ նախադասությունները՝ «Մատակարարը պետք է ունենա տվյալ սարքի սպասարկման կենտրոն և ներկայացուցչություն ՀՀ ում՝ ծրագրային և անհրաժեշտ տեխնիկական աջակցություն տրամադրելու համար: Պայմանագրի շրջանակում պետք է իրականացվի առնվազն 2 մասնագետի ուսուցում առնվազն 3 օր տևողությամբ որ պետք է ներառի ինչպես անօդաչու սարքի թռիչքային մասի ապահովմանը, այնպես էլ կից ծրագրային ապահովումներով աշխատանքին: Ծրագրային արդիականացնում ամբողջ շահագործման ժամանակաշրջանում: Թռիչքի գոտիներ առանց սահմանափակումների ՀՀ տարածքում:»
- Հավելված 1.3-ում (այսուհետ՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) գնման ընթացակարգի 4.3.2, 4.4.2, 4.3.3 և 4.4.3 կետերը ենթակա են շտկման /Համայնքը՝ Նոր Խարբերդ, Վարչատարածքային միավորը՝ Արարատի մարզ/:
- Կցված չէ լիազորողի և լիազորված անձի անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենները:
- Ներկայացրած փաստաթղթերում ակտիվ չէ էլեկտրոնային թվային ստորագրությունը:

5.Հանձնաժողովը որոշեց՝

5.1 Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԳՀԱՊՁԲ-ԱԹՍ-22/2** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝

29.11.2022թ.-ին նիստը կասեցնել՝ ծանուցել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:
Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. «ՀՀ ՔԿ ԳՀԱՊՁԲ-ԱԹՍ-22/2» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից արձանագրված անհամապատասխանության շտկման վերաբերյալ տեղեկություններ

Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

7. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և գնման հայտով սահմանած գինը

Հ/Հ	Անվանում	Գնման հայտով սահմանած գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները /ՀՀ դրամ/					
			Արմեն Սաֆարյան ԱՁ			ՀՈՎ-ԱՐՍ ՍՊԸ		
			Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանու գինը
1	Անօդաչու թռչող սարք	7 500 000	6 125 000	1 225 000	7 350 000	6 200 000	1 240 000	7 440 00

8. Տվյալներ հրավերի վերաբերյալ կատարված հարցումների, պատասխանների և հրավերում կատարված փոփոխությունների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ, պատասխաններ չեն եղել: Հրավերի փոփոխություն չի կատարվել:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 01.12.2022թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

10. *01.12.2022թ. ժամը 12:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ*

Նիստը վերսկսվեց 01.12.2022թ. ժամը 12:00-ին:

11. Հանձնաժողովը որոշեց՝

11.1 **«ՀՀ ՔԿ ԳՀԱՊՁԲ-ԱԹՍ-22/2»** ծածկագրով մրցույթի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից **Արմեն Սաֆարյան ԱՁ-ին:**

11.1 **«ՀՀ ՔԿ ԳՀԱՊՁԲ-ԱԹՍ-22/2»** ծածկագրով մրցույթի 1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **ՀՈՎ-ԱՐՍ ՍՊԸ-ին:**

11.2 Հաստատել **«ՀՀ ՔԿ ԳՀԱՊՁԲ-ԱԹՍ-22/2»** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը համաձայն հավելվածի:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) — Գագիկ Արշակյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Արթուր Մկրտչյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Վահագն Մկրտչյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Վահրամ Անդրեասյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Սիլվա Գարանյան
5.Գնման Պատասխանատու/ հանձնաժողովի քարտուղար (ԳՊ/ՄՀմ) — Նաիրա Բաբայան